

ԱՍԻԱԿԱՆ ՋԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՎՈՂ

**ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ  
ՍԵԿՏՈՐԻ ԾՐԱԳԻՐ –  
ԼՐԱՑՈՒՑԻՉ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ**

*Հանձնման ամսաթիվ – 06/08/2013*

*Վերանայման ամսաթիվ – 26/04/2014*

*Հաստատման ամսաթիվ -01.07.2014*

**Ենթաձրագիր VII**

**ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ  
ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ  
ԲԱՐԵԼԱՎՈՒՄ**

**L2860-ICB-1-07**

**Կապան, Մեղրի, Գորիս քաղաքներ և Աճանան,  
Սյունիք, Բոնակոթ գյուղեր**

**ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ԶՆՆՈՒԹՅՈՒՆ**



ԱՍԻԱԿԱՆ ՋԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՎՈՂ

**ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ  
ՍԵԿՏՈՐԻ ԾՐԱԳԻՐ –  
ԼՐԱՑՈՒՑԻՉ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ**

**Ենթաձրագիր VII**      **ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ  
ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ  
ԲԱՐԵԼԱՎՈՒՄ**

**L2860-ICB-1-07**      **Կապան, Մեղրի, Գորիս քաղաքներ և Աճանան,  
Սյունիք, Բռնակոթ գյուղեր**

**ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ԶՆՆՈՒԹՅՈՒՆ**

ՀԳՇՆ ՍՊԸ տնօրեն՝

Վ. Հովասափյան

Բնապահպան՝

Ք. Սահակյան



Երևան,  
հունիս, 2014թ



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ .....	4
2. ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ԳՈՑՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ .....	6
3. ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ ԵՎ ԿԼԻՄԱՆ .....	7
3.1 ՀՀ Սյունիքի մարզի Գորիս քաղաք և Բոնակոթ գյուղ .....	7
3.2 ՀՀ Սյունիքի մարզի Կապան, Մեղրի քաղաքներ և Աճանան, Սյունիք գյուղական համայնքներ.....	8
4. ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐ .....	9
4.1. ՀՀ Սյունիքի մարզի Գորիս քաղաք և Բոնակոթ գյուղ .....	9
4.2. ՀՀ Սյունիքի մարզի Կապան, Մեղրի քաղաքներ և Աճանան, Սյունիք գյուղական համայնքներ.....	10
5. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ .....	12

### ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐԻ ՑԱՆԿ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. Բնապահպանական արագ գնահատման (ԲԱԳ) ստուգաթերթ .....	13
ՀԱՎԵԼՎԱԾ 2. ԵՆԹԱԾՐԱԳՐԻ ՍԽԵՄԱՏԻԿ ՔԱՐՏԵԶ .....	17

# 1. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ

Ենթածրագրի այս բաղադրիչի նպատակն է բարելավել ծրագրի շրջանակներում ընդգրկված ՀՀ Սյունիքի մարզի Կապան, Մեղրի, Գորիս քաղաքների և Աճանան, Սյունիք, Բոնակոթ գյուղական բնակավայրերի խմելու ջրի մատակարարման համակարգերը:

Առաջնահերթությունը տրվել է բնակավայրերի ջրամատակարարման համակարգերի բարելավմանը: Կապան, Մեղրի, Գորիս քաղաքների և Աճանան, Սյունիք, Բոնակոթ գյուղերի ջրամատակարարման համակարգերի բարելավման նպատակով իրականացվող աշխատանքները ներառում են՝

## ➤ բ. Գորիս

- 2x500մ<sup>3</sup> տարողությամբ ՕԿՁ-ների վերանորոգում՝ իրենց կառավարման հանգույցների կառուցմամբ (I գոտի), և տարածքի ցանկապատում (L= 177,5մ):
- 1x500 մ<sup>3</sup> և 1x1000 մ<sup>3</sup> տարողությամբ ՕԿՁ-ների վերանորոգում (II գոտի):
- 2x250 մ<sup>3</sup> տարողությամբ ՕԿՁ-ների վերանորոգում (IV գոտի):
- Մոտ 5կմ ընդհանուր երկարությամբ de50-de225 տրամագծի պոլիէթիլենե խողովակներից բաշխիչ ցանցի ջրագծերի կառուցում և վերակառուցում:
- Անհատական տների ընդհանուր թվով 159 տնային միացումների մուտքագծերի հիմնովին վերակառուցում՝ ջրաչափական հորերի կառուցմամբ:
- Ընդհանուր թվով 4 բազմաբնակարան շենքերի մուտքագծերի հիմնովին վերակառուցում՝ ջրաչափական հորերի կառուցմամբ:
- Ջրամատակարարման բաշխիչ ցանցի կառավարման և համակարգի ներսում բարձր ճնշումների կարգավորման նպատակով քաղաքի տարբեր հատվածներում 9 ճնշման կարգավորիչ և 2 ջրամատակարարման հորերի կառուցում:
- Բաշխիչ ցանցում 46 թաղված փականային հանգույցների (ԹՓՀ) կառուցում և վերակառուցում:

## ➤ բ. Կապան

- L=3100.0 մ ընդհանուր երկարությամբ Շինարարների և Բաղաբուրջի ՕԿՁ-ները (թիվ 5 և 6 ՕԿՁ-ներ) սնող գույգ ջրատարների վերակառուցում DN200,
- L=26480,0 մ ընդհանուր երկարությամբ խողովակների վերակառուցում և կառուցում՝ պոլիէթիլենե խողովակներով,
- 109 բազմաբնակարան շենքերի մուտքագծերի փոխարինում,
- 363 մասնավոր տների և տնտեսվարող սուբյեկտների մուտքագծերի փոխարինում՝ տեղադրելով նույն քանակի ջրաչափական հորեր,
- ճնշման կարգավորիչ (6 հատ), փականային (8 հատ) և հիդրանտային հորերի (6 հատ), թաղված փականային հանգույցների (117 հատ) կառուցում և վերակառուցում:
- DN200 L=14600.0 մ ընդհանուր երկարությամբ Արփիկի, Լեռնագործների, Դավիթ Բեկի և Բարաբաթումի ՕԿՁ-ները սնող ջրատարի վերակառուցում (թիվ 7 ՕԿՁ-ներ):

## ➤ բ. Մեղրի

- Զվար ՋՄԿ լիովին վերանորոգում,

- L=700 մ ընդհանուր երկարությամբ ջրատարի վերակառուցում DN 200 մմ տրամագծի պողպատե խողովակներով:
  - 1000մ<sup>3</sup> և 500մ<sup>3</sup> տարողությամբ ՕԿՁ-ների վերանորոգում:
  - L=8920.0 մ ընդհանուր երկարությամբ խողովակների վերակառուցում և կառուցում՝ պողպատե և պոլիէթիլենե խողովակներով:
  - 33 բազմաբնակարան շենքերի և հասարակական նշանակության օբյեկտների մուտքագծերի փոխարինում:
  - 725 անհատական տների մուտքագծերի փոխարինում՝ ջրաչափական հորերի տեղադրմամբ:
  - ճնշման կարգավորիչ (5 հատ), փականային (4 հատ) և հիդրանտային հորերի (4 հատ), թաղված փականային հանգույցների (9 հատ) կառուցում և վերակառուցում:

➤ ***գ. Բռնակոթ***

- 250 մ<sup>3</sup> տարողությամբ ՕԿՁ-ի վերանորոգում՝ համապատասխան փականային հանգույցների տեղադրմամբ, և տարածքի ցանկապտում (L=136մ):
- Քլորակայանի կառուցում:
- Մոտ 10կմ ընդհանուր երկարությամբ de50-de110 տրամագծի պոլիէթիլենե խողովակներից բաշխիչ ցանցի ջրագծերի կառուցում և վերակառուցում:
- Անհատական տների ընդհանուր թվով 524 տնային միացումների մուտքագծերի հիմնովին վերակառուցում՝ ջրաչափական հորերի կառուցմամբ:
- Բաշխիչ ցանցում 4 թաղված փականային հանգույցների (ԹՓՀ) կառուցում և վերակառուցում:

➤ ***գ. Սյունիք***

- L=2240.0 մ ընդհանուր երկարությամբ խողովակների վերակառուցում և կառուցում՝ պոլիէթիլենե խողովակներով,
- 6 բազմաբնակարան շենքերի մուտքագծերի փոխարինում,
- 130 մասնավոր տների մուտքագծերի փոխարինում՝ ջրաչափական հորերի տեղադրմամբ,
- փականային (1 հատ), հիդրանտային հորերի (1 հատ), ինչպես նաև թաղված փականային հանգույցների (6 հատ) կառուցում և վերակառուցում:

➤ ***գ. Աճանան***

- L=2835.0 մ ընդհանուր երկարությամբ խողովակների վերակառուցում և կառուցում՝ պողպատե և պոլիէթիլենե խողովակներով,
- 73 մասնավոր տների մուտքագծերի փոխարինում՝ ջրաչափական հորերի տեղադրմամբ,
- ճնշման կարգավորիչ (1 հատ) և փականային հորերի (1 հատ) կառուցում և վերակառուցում:

Կապան, Մեղրի, Գորիս քաղաքների և Աճանան, Սյունիք, Բռնակոթ գյուղերի բնակչության թիվը 01.01.2013թ. դրությամբ կազմում է 82628 մարդ, որից քաղաքային բնակչությունը՝ 73750

մարդ: Բաժանորդների ընդհանուր թիվը կազմում է 22518, այդ թվում գյուղական համայնքներում՝ 1344 բաժանորդ:

Տարեկան բնակչության աճի ցուցանիշը համաձայն «Հայաստանի Ժողովրդագրական Ժողովածու 2007»-ի հրատարակված տվյալների կազմում է 0.43 %:

Ծրագրի իրականացման արդյունքում նախատեսվում է ծրագրում ընդգրկված համայնքների բնակիչներին ապահովել խմելու որակի ջրով և կայուն ջրամատակարարմամբ:

Ենթածրագրով նախատեսված աշխատանքները ներառում են արդեն գոյություն ունեցող կառուցվածքների վերականգնման աշխատանքներ, հետևաբար դրանց ազդեցությունը բնական լանդշաֆտների վրա կլինի նվազագույն՝ կրելով ժամանակավոր բնույթ:

Շինարարական աշխատանքների իրականացման ժամանակ, ըստ անհրաժեշտության, ասֆալտ ձեռք կբերվի մասնագիտացված ասֆալտի գործարանից, որը պատասխանատու է շրջակա միջավայրի վրա ազդեցության մեղմացման միջոցառումների իրականացման համար: Բոլոր ասֆալտի գործարանները գործում են ՀՀ բնապահպանական օրենսդրության համապատասխան:

## **2. ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

Ենթածրագրում ընդգրկված բոլոր համայնքները, բացառությամբ Բոնակոթ գյուղի սպասարկվում են ՀԶԿ ՓԲԸ-ի կողմից: Բոնակոթ գյուղում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի սպասարկումն իրականացվում է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից:

Կապան քաղաքի ջրամատակարարումն իրականացվում է Աջիբաջ և Գյարդ գետային ջրընդունիչ կառուցվածքներից՝ 350 լ/վ ջրաքանակով և կապտաժներից: Քաղաքը բաժանվել է առանձին ջրամատակարարման գոտիների՝ ըստ ՕԿՁ-ների սպասարկման տարածքների: Քաղաքում գործող ՕԿՁ-ների միջոցով ջուրը տրվում է Գեղի ՋՄԿ:

Մեղրի քաղաքի ջրամատակարարումն իրականացվում է Լիճք և Զվար գետային ջրընդունիչ կառուցվածքներից՝ 60լ/վ ջրաքանակով և Սեթենց աղբյուրակապերից: «Զվար» ՋՄԿ-ից ջուրը քաղաք է տրվում 200մ տրամագծի ջրատարով: Քաղաքում գոյություն ունեցող ջրամբարներից շահագործվում են երկուսը: ՕԿՁ-ներից ջուրը՝ 150մ տրամագծի պողպատե ջրագծերով տրվում է բաշխիչ ցանց:

Գորիս քաղաքի ջրամատակարարումը՝ 200լ/վրկ ջրաքանակով իրականացվում է «Մուխութուրյան» և «Ակներ» աղբյուրներից՝ ինքնահոս եղանակով: Ինքնահոս ջրատարի ընդհանուր երկարությունը կազմում է մոտ 60կմ: Ջրատարից ջուրը տրվում բաշխիչ ցանց՝ քաղաքում գործող երեք խումբ ՕԿՁ-ներով:

Աճանան, Մյունիք գյուղերի ջրամատակարարումն իրականացվում է «Չանախյի-Կապան» ջրատարի վրա կառուցված ջրաչափական հանգույցից: Ջուրը առանձին պողպատե խողովակներով տրվում է անմիջապես համայնքների բաշխիչ ցանցեր:

Բոնակոթ գյուղի ջրամատակարարումն իրականացվում է 2470.0մ բացարձակ բարձրության վրա գտնվող աղբյուրակապերից, որտեղից 150մ տրամագծի պողպատե խողովակով ջուրը տրվում է ՕԿՁ:

Վերը նշված բնակավայրերում ջրամատակարարման ներքին համակարգերը գտնվում են վթարային վիճակում, բաշխիչ ցանցերը և գոյություն ունեցող ՕԿՁ-ներն ունեն փոխարինման կամ վերանորոգման կարիք:

ԱԶԲ-ի ՋնՁ սեկտորի ծրագրի /2008-2012թթ/ շրջանակներում ֆինանսավորմամբ Կապան քաղաքում փոխարինվել է մոտ 16.0կմ երկարությամբ ջրագիծ, Գորիս քաղաքում՝ 22.0կմ երկարությամբ ջրագիծ: 2007թ. Գյուղատնտեսական ԾԻԳ-ի ֆինանսավորմամբ Բոնակոթ գյուղի բաշխիչ ցանցում իրականացվել են մասնակի վերակառուցման աշխատանքներ, որոնց արդյունքում 6-7կմ երկարությամբ պոլիէթիլեն խողովակներ են տեղադրվել:

Ուսումնասիրված բնակավայրերից՝ Գորիս, Կապան, Մեղրի քաղաքներն ամբողջությամբ կոյուղացված են: Գոյություն ունեցող կոյուղու մաքրման կայանները չեն գործում, ինչի պատճառով կոյուղաջրերն անմիջապես լցվում են Վարարակ, Ողջի և Մեղրի գետեր:

Աճանան և Բոնակոթ գյուղերը չունեն ջրահեռացման համակարգ, բնակիչներն օգտվում են բակային զուգարաններից:

Սյունիք գյուղ ունի ջրահեռացման կենտրոնացված համակարգ, սակայն չունի կոյուղու մաքրման կայան:

### **3. ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ ԵՎ ԿԼԻՄԱՆ**

Ենթածրագրի շրջանակներում ընդգրկված համայնքները գտնվում են ՀՀ Սյունիքի մարզի Գորիսի, Կապանի, Մեղրիի և Սիսիանի տարածաշրջաններում: ՀՀ Սյունիքի մարզը գտնվում է հանրապետության հարավում, որտեղ պետական սահմանով սահմանակից է Իրանի Իսլամական հանրապետությանը: Մարզը զբաղեցնում է 4.506ք.կմ մակերես: Մարզկենտրոնը Կապան քաղաքն է, որը Երևան քաղաքից գտնվում է 301կմ հեռավորության վրա:

Սյունիքի մարզում հյուսիսից հարավ ձգվում է Զանգեզուրի լեռնաշղթան: Մարզի ամենամեծ գետը Որոտանն է: Ենթածրագրում ընդգրկված գյուղական համայնքներից՝ Բոնակոթ գյուղը գտնվում է Սիսիանի տարածաշրջանում, իսկ Աճանան և Սյունիք գյուղերը՝ Կապանի տարածաշրջանում:

#### **3.1 ՀՀ Սյունիքի մարզի Գորիս քաղաք և Բոնակոթ գյուղ**

Սյունիքի մարզի դիտարկվող տարածքը գտնվում է մարզի հյուսիս-արևելյան մասում, Բարգուշատի լեռնաշղթայի հյուսիսային լանջին: Վերը նշված բնակավայրերը տեղակայված են Որոտան գետի ավազանում՝ ծովի մակերևույթից 1250-2150մ բարձրությունների վրա: Գորիս քաղաքը մարզկենտրոնից գտնվում է 65 կմ հեռավորության վրա, իսկ Երևան քաղաքից՝ 236 կմ հեռավորության վրա:

Միսիանի և Գորիսի շրջանները գտնվում են ցուրտ կլիմայական գոտում: Տարածաշրջանի կլիման բնութագրվում է ցուրտ լեռնային, անհողմային ձմեռով և տաք ամառով, որտեղ հուլիսի միջին ամսական ջերմաստիճանը կազմում է +16°C, իսկ հունվարի միջին ջերմաստիճանը՝ -5°C-ից մինչև -12 °C: Օդի բացարձակ առավելագույն ջերմաստիճանը կազմում է +20°C, իսկ բացարձակ նվազագույնը՝ -15 °C: Միջին տարեկան մթնոլորտային տեղումների քանակը 400-750մմ է: Ձյան ծածկույթի հաստությունը հասնում է մինչև 50 սմ: Գրունտի սառեցման խորությունը տատանվում է 86-92սմ՝ կախված բացարձակ բարձրությունից: Օդի միջին բազմատարյա հարաբերական խոնավությունը կազմում է 45-60%: Տարվա ընթացքում գերակշռում են հյուսիս-արևմտյան քամիները, քամու միջին տարեկան արագությունը 3-5մ/վրկ է:

Գեոմորֆոլոգիական տեսակետից շրջանն իրենից ներկայացնում է միջին բարձրության լեռնային գոտի, որին բնորոշ է լավաներով ծածկված սարավանդներ, v-աձև խորը կիրճերով և գետերով կտրտված լանդշաֆտ: Ռելիեֆին բնորոշ են հրաբխաերոզիոն և ջրաերոզիոն ձևերը, մակերևույթի խիստ կտրտվածությունը, ինչպես նաև ֆիզիկական ակտիվ հողմահարությունը: Մակերևութային գերակշռող թեքությունը կազմում է 5-10°:

Հիդրոերկրաբանական տեսակետից տարածաշրջանում գրունտային ջրերի տեղամասերը գտնվում են ցածր հորիզոնների վրա, քանի որ հրաբխածին կազմավորումները բնութագրվում են խիստ ճեղքավորվածությամբ: Գետնի մակերեսից 3-5 մ-ից բարձր գտնվող գրունտային ջրերի տեղամասեր հանդիպում են միայն Որոտան գետի և նրա վտակների դարավանդներում:

Էկոգոգեն երկրաբանական երևույթներից հանդիպում են հեղեղատային հոսքեր, հողմնահարում, հունախորացում, իսկ թեք լանջերում՝ քարաթափություն, սողանքային երևույթների առկայություն:

Նկարագրվող տարածաշրջանի՝ բնակավայրերում երկրաշարժերի հնարավոր ուժգնությունը կազմում է 8-9 բալ, իսկ առավելագույն հորիզոնական արագացումը՝ 0,2g- 0.3g:

### **3.2 ՀՀ Սյունիքի մարզի Կապան, Մեղրի քաղաքներ և Աճանան, Սյունիք գյուղեր**

Դիտարկվող տարածքը երկրաձևաբանական տեսակետից հարում է Հարավ-Ջանգեզուրյան բարձրադիր և միջին բարձրության լեռներին և Մեղրու լեռնաշղթային:

Վերը նշված բնակավայրերը գտնվում են Սյունիքի մարզի հարավային մասում, Ողջի և Մեղրի գետավազաններում՝ ծովի մակերևույթից 600-1150մ բարձրությունների վրա: Մեղրի քաղաքը մարզկենտրոնից գտնվում է 72 կմ հեռավորության վրա, իսկ Երևան քաղաքից՝ 373 կմ հեռավորության վրա:

Մեղրու և Կապանի շրջանները գտնվում են տաք կլիմայական գոտում: Տարածաշրջանում ամռանը շոգ է և չոր, որտեղ հուլիսի միջին ջերմաստիճանը +21°C է, իսկ հարաբերական խոնավությունը բարենպաստ է և կազմում է մինչև 35%: Ձմռանը հունվարի միջին ջերմաստիճանը՝ 0-ից մինչև -5°C է: Բացարձակ առավելագույն ջրմաստիճանը կազմում է +41°C, իսկ բացարձակ նվազագույնը՝ -18°C: Միջին տարեկան մթնոլորտային տեղումների քանակը 585մմ է: Ձյան ծածկույթի առավելագույն հաստությունը հասնում է մինչև 50 սմ: Գրունտի սառեցման խորությունը տատանվում է 12-14սմ՝ կախված բացարձակ բարձրությունից: Օդի



հարաբերական խոնավությունը կազմում է 60-70%: Տարվա ընթացքում գերակշռում են հարավարևելյան թույլ քամիներ՝ 1.3մ/վրկ արագությամբ:

Գեոմորֆոլոգիական տեսակետից Կապանի շրջանն իրենից ներկայացնում է՝ ուղղաձիգ լանջերով և աստիճանաձև կատարներով, v-աձև հովիտներով և ձորերով կտրտված միջին բարձրության լեռներ, որոնք ունեն 7-12<sup>o</sup> լանջերի թեքություն:

Մեղրիի շրջանն իրենից ներկայացնում է լայն հովիտներով և փոքր ձորակներով կտրտված ցածրադիր լեռնային մեղմաթեք հարթավայրեր՝ մինչև 3<sup>o</sup> լանջերի թեքությամբ: Ռելիեֆին բնորոշ են ջրաերոզիոն ձևերը, խիստ անկանոն մակերևույթը, ինչպես նաև ֆիզիկական ակտիվ հողմահարությունը:

Նկարագրվող տարածաշրջանում՝ Կապան, Աճանան, Սյունիք բնակավայրերում երկրաշարժերի հնարավոր ուժգնությունը կազմում է 8 բալ, իսկ առավելագույն հորիզոնական արագացումը՝ 0,2 g, իսկ Մեղրի քաղաքում՝ համապատասխանաբար 9 բալ և 0.4g արագացում:

#### **4. ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐ**

Սյունիքի մարզը, շնորհիվ աշխարհագրական դիրքի, ռելիեֆի կտրտվածության, լանջերի տարբեր դիրքադրության և ֆլորիստական պրովինցիաների փոխազդեցության, հայտնի է իր հարուստ լանդշաֆտային և կենսաբանական բազմազանությամբ: Տարբեր բարձունքային գոտիականությունը՝ 3904մ /Կապուտջուղ/ - 375մ /Մեղրի/ և կլիմայի տարբեր տիպերի հերթափոխումը նպաստել են տարածաշրջանի կենսաբազմազանության և էկոհամակարգերի հարստացմանը:

Լանդշաֆտային և կենսաբանական բազմազանության պահպանության նպատակով տարածաշրջանում ստեղծվել են մի շարք բնության հատուկ պահպանվող տարածքներ (ԲՀՊՏ):

##### **4.1. ՀՀ Սյունիքի մարզի Գորիս քաղաք և Բոնակոթ գյուղ**

Տարածաշրջանում անտառային դարչնագույն կրազերծված, կամ մուգ շականակագույն խճաքարային հողերի վրա ձևավորվել է միջին լեռնային լանդշաֆտային տիպը՝ լեռնատափաստանային և մարգագետնատափաստանային բուսականությամբ:

Ուսումնասիրվող տարածքներում Ֆլորան հիմնականում տարախոտային է, խիտ անտառները բացակայում են: Ծառատեսակներն արտահայտված են հիմնականում քսերոֆիլ նոսր անտառային բուսականության տիպով՝ գիհու, սաղարթավոր խառը տեսակների մասնակցությամբ /Գորիս / և սալորենու, տանձենու տեսակներով: Տեղ-տեղ արտահայտված են թփուտային, ժայռային և քարացրոնային բուսականությունը: Թփերը հիմնականում նոսր ձևով հանդիպում են բոլոր տարածքներում, գերադասելով խոնավ ապրելավայրերը: Տարածքի լեռնատափաստանային բուսականությունն աչքի է ընկնում տարախոտա-հացազգային մասնակցությամբ: Այս լանդշաֆտային գոտում ամենաշատ տեսակներով աչքի են ընկնում բարդաձաղկավորները՝ 49 տեսակ, հացազգիները՝ 34 տեսակ, լոբազգիները և վարդազգիները՝

23-ական տեսակներ, խաչածաղկավորները՝ 7տեսակ: Վայրի դեղատու և ուտելի բույսերի ցանկում ընդգրկված են է շուրջ 100 բուսատեսակներ:

Տարածքներում պահպանության կարիք ունեցող բուսատեսակներից են՝ *Astragalus agassii* Manden.-Գազ Աղասու, *Dracocephalum botryoides* Stev.-Վիշապազլուխ ողկույզային, որոնք գրանցված են ՀՀ Բույսերի կարմիր գրքում:

Լեռնատափաստանային գոտու անողնաշարավոր կենդանիների ֆաունան համեմատաբար աղքատ է: Դիտարկվող տարածքում հանդիպում են հազվադեպ և անհետացող տեսակներ՝ *Bradyporus dilatatus* (ծղրիդներ), *Montana armeniaca* (մորեխներ), *Eumerus sogdianus* (երկթևանիներ), *Bruchidius armeniacus*, *Cryptocephalus moravi* (բզեզներ):

Այս գոտին առավել բարենպաստ է թփուտային դաշտամկան (*Msubterraneus*), կզաքիսի (*Martes foina*), աղվեսի (*Vulpes vulpes*), գայլի (*Canis lupus*) և այլ տեսակների համար: Կաթնասունների գիշատիչ տեսակներից միայն գորշ արջն է գրանցված ՀՀ Կենդանիների Կարմիր գրքում: Չղջիկները ներկայացված են ՀՀ-ում լայն տարածված տեսակներով: Սողեսները ներկայացված են երկու տեսակներով՝ կովկասյան ագամա և միջին մողես (*Laudakia caucasia*, *Lacerta media*):

Երկկենցաղները նույնպես ներկայացված են լայն տարածված 2 տեսակներով՝ կանաչ դողոշ, փոքրասիական գորտ (*Bufo viridis*, *Rana macrocnemis*), որոնք հիմնականում հանդիպում են ջրահոսքերում և պահպանության կարիք չունեն:

Տափաստանային գոտու թռչնաշխարհը ներկայացված է ավելի քան 30 տեսակով, որոնցից առավել լայն տարածում ունեն ճնճղուկազգիները (*Passeriformes*) և ճուռականմանները (*Falconiformes*): Բազմաթիվ են նաև հավազգիների ներկայացուցիչները, որոնք ներկայացված են մոխրագույն կաքավով և լորով:

Տարածաշրջանն հարուստ է հնավայրերով, պատմաճարտարապետական և բնապահպանական տարածքներով:

Գորիս քաղաքի անմիջապես հարևանությամբ գտնվում է «Գորիսի» արգելավայրը: Տաթևի վանական համալիրը Գորիս քաղաքից գտնվում է 20կմ հեռավորության վրա: Գորիս քաղաքի մոտակայքում գտնվում են բնության հուշածաններ՝ «Գորիսի բնական թունելը» և «Գորիսի բուրգերը», վերջինս համարվում է ռեկրացիայի և զբոսաշրջության կենտրոն:

#### **4.2. ՀՀ Սյունիքի մարզի Կապան, Մեղրի քաղաքներ և Աճանան, Սյունիք գյուղական համայնքներ**

Տարածաշրջանում լեռնաանտառային գոտու դարչնագույն և լեռնամարգագետնային հողերի վրա ձևավորվել է անտառային և ալպյան բուսատեսակները: Այս հողերը բնութագրվում են հումուսի բարձր պարունակությամբ: Տարածքի մարգագետնային բուսականությանը բնորոշ են տարախոտա - բոշխային (գորգեր) բուսածածկի տիպերը: Խոտաբույսերից հանդես են գալիս գազեր, փետրախոտեր, շյուղախոտեր, աբեղախոտեր:

Անտառային բուսականությանը բնորոշ են բույսերի լայնատերև ձևերը, մասնավորապես՝ հաճարենի (*Fagus orientalis* Lipsky), կաղնի (*Quercus iberica* Stev. *Q. macranthera* Fisch. Et Mey. Ex

Hohen), բոխի (*Carpinus betulus* L., *C. Orientalis* Mill), հացենի (*Fraxinus excelsior* L.), լորենի (*Tilia begoniifolia* Stev.):

Մեղրու տարածաշրջանի ցածրադիր շրջանների՝ մինչև 800-1000մ բարձրության զառիթափ, քարքարոտ լանջերին և նրա շրջակայքում առկա է կիսատափաստանային գոտու լեռնային չորասեր (ֆրիգանոիդ) բուսականության տիպը: Մրանք հաճախ կոչվում են կմախքային լեռների բուսականություն, որոնց վրա նկատվում է իրանական անապատների ազդեցությունը: Կիսաանապատներին ամենաբնորոշ բուսատեսակը բուրավետ օշինդրն է (*Artemisia fragrans*):

Մեղրիի տարածաշրջանում լայն տարածում ունեն նաև չորասեր նոսրանտառները, որոնք ներկայացված են ցաքու, ասպիրակի, ցախակեռասների, դժնիկի, հասմիկի և գիհու տեսակներով: Կապանի տարածաշրջանին բնորոշ է լայնասաղարթ խառը անտառները:

Տարածաշրջանում կան նաև կարմիր գրքում գրանցված բուսատեսակներ, որոնց պահպանության նպատակով ստեղծվել են հատուկ պահպանվող տարածքներ: Լայնատերև (կաղնու, բոխու) անտառների, յուրահատուկ բուսական համակեցությունների (կենու, արևելյան սոսու և արևելյան հաճարենու պուրակները) պահպանության նպատակով Մեղրու լեռնաշղթայի հյուսիսային լանջերի ստեղծվել է «Շիկահողի» պետական արգելոցը (Կապան քաղաքից 25 կմ հեռավորության վրա): Այստեղ են գտնվում նաև «Արևիկ» ազգային պարկը և Բողաքարի արգելավայրը, որոնց պահպանության օբյեկտներն են Էնդեմիկ բուսատեսակները (Վարդակակաչ սոսնովակու, Խլածաղիկ թախտաջանի, Կաղնի արաքսյան և այլն):

Ընդհանուր առմամբ ուսումնասիրվող տարածքն ունի հարուստ ֆաունա և բնակատեղի է Հայաստանի կենդանիների Կարմիր գրքում գրանցված մի շարք կենդանական տեսակների համար, ինչպիսիք են՝ բեզուարյան այծը (*Capra aegagrus*), մացառախոզը (*Hystrix indica*), անտառակատուն (*Felis silvestris*), հայկական իծը (*Vipera raddei*), ջրասամույրը (*Lutra lutra*), կովկասյան մարեհավը (*Tetrao mlokosiewiczzi*), մի շարք արծիվների, անգղների, բազեանմանների տեսակներ:

Տարածաշրջանի կենդանական աշխարհը հարուստ է Էնդեմիկ անողնաշարավոր տեսակներով, այդ թվում՝ *Phytodrymadusa armeniaca* (ծղրիդներ), *Nocarodes armenus* (մորեխներ), *Cantharis araxicola* (բզեզներ), *Tomomyza araxana*, *Bombilius schelkovnikovi* (երկթեվանիներ), *Gabbiella araxena*, *Pupilla bipapulata* (փափկամարմիններ), *Zodarion petrobium* (սարդեր):

Գետերում և վտակներում բնակվում են 6 տեսակի ձկներ, որոնցից կարմրախայտը *Salmo trutta fario* ամենաարժեքավոր է:

Դիտարկվող տարածքում կաթնասունների ֆաունան ներառում է 3 տեսակի միջատակերեր, 6 տեսակի չղջիկներ, 15 տեսակի կրծողներ, 9 տեսակի գիշատիչներ և 4 տեսակի սմբակավորներ: Անտառային վայրերում այդ տեսակներից ապրում են սպիտակափող ոզնին (*Erinaceus concolor*), անտառային քնամուկը (*Dryomis nitedula*), աքիսը (*Mustela nivalis*), քարակզաքիսը (*Martes foina*), աղվեսը (*Vulpes vulpes*) և այլն:

Երկկենցաղները ներկայացված են 4 տեսակներով, իսկ սողունները ներառում են մողեսների 11, օձերի 13 և կրիաների 2 տեսակներ: Թռչնաֆաունան ներկայացված է 141 տեսակներով, որոնք մեծ մասամբ բնակվում են անտառներում:

Մեղրի քաղաքից 1.5-2կմ հեռավորության վրա գտնվում է «Արևիկ» ազգային պարկը, իսկ 10կմ հեռավորության վրա՝ «Բողաքարի» արգելավայրը: Ենթադրագրում ընդգրկված բնակավայրերն ունեն պատմամշակութային հուշարձաններ, այդ թվում Հալիձորի բերդը, Վահանավանքը, որոնք Կապան քաղաքից գտնվում են 1-3կմ հեռավորությունների վրա, իսկ Մեղրի քաղաքի շրջակայքում գտնվում է Մեղրիի բերդը: Առկա պատմամշակութային հուշարձանները գտնվում են բնակելի տարածքներից դուրս (տես՝ [Հավելված 2](#)), հետևաբար ծրագրի իրականացման արդյունքում որևէ բացասական ազդեցություն նրանց վրա չի ակնկալվում: Ենթադրագրով նախատեսված աշխատանքներն իրականացվում են համայնքների բնակելի տարածքներում, ուր բացակայում են բնական լանդշաֆտները:

Այս տարածքները բավականին հեռու են նաև վերականգնման ենթակա ջրի մաքրման կայանի տարածքից ([Հավելված 2](#)): Վերականգնվող ՕԿՁ-ները գտնվում են քաղաքի ծայրամասում, որոնց տարածքը մասամբ պարսպապատ է և բավականին հեռու է նշված եկեղեցիներից: Մոտակա բնակելի տունը տեղակայված է ՕԿՁ-ների տարածքից մոտ 250մ հեռավորության վրա:

Ենթադրագրով նախատեսված աշխատանքները ներառում են արդեն գոյություն ունեցող կառուցվածքների վերականգնման աշխատանքներ, հետևաբար դրանց ազդեցությունը բնական լանդշաֆտների վրա կլինի նվազագույն՝ կրելով ժամանակավոր բնույթ:

## 5. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Շրջակա միջավայրի նախնական գննությունը (ՇՄՆՁ) բացահայտել է, որ նախատեսվող ջրամատակարարման համակարգի բարելավման աշխատանքների իրականացման տարածքներում /ծրագրի ազդեցության գոտում/ լանդշաֆտի, բուսական ու կենդանական տեսակների, հողային և ջրային ռեսուրսների վրա վնասակար ազդեցություններ չեն ակնկալվում: Ենթադրագրով նախատեսված աշխատանքները ներառում են արդեն գոյություն ունեցող կառուցվածքների վերականգնման աշխատանքներ, հետևաբար դրանց ազդեցությունը բնական լանդշաֆտների վրա կլինի նվազագույն՝ կրելով ժամանակավոր բնույթ:

Ենթադրագիրն իրականացվելու է հիմնականում բնակավայրերի կառուցապատված տարածքներում, իսկ աշխատանքների իրականացման համար այլ տարածքներ չեն ընդգրկվի: Ծրագրի իրականացման արդյունքում, տարածաշրջանում գոյություն ունեցող հատուկ պահպանվող տարածքները և պատմամշակութային հուշարձանները ևս չեն ենթարկվի որևէ ազդեցության:

Ըստ շրջակա միջավայրի նախնական գննության ենթադրագիրը դասակարգվել է որպես Բ կարգի ծրագիր: Աշխատանքային նախագծի հետ տվյալ ենթադրագիր համար պետք է մշակվի շրջակա միջավայրի կառավարման պլան /ՇՄԿՊ/, որը պետք է ներառի աշխատանքային նախագծում ներառված բոլոր համայնքները:

## ՀԱՎԵԼՎԱԾ 1. Բնապահպանական արագ գնահատման (ԲԱԳ) ստուգաթերթ

Երկիրը/ծրագրի անվանումը

ՀՀ բնակավայրերի ջրամատակարարման ու ջրահեռացման համակարգերի բարելավում

Ստորաբաժանում

**Ենթածրագիր 7.** Սյունիքի մարզի Կապան, Մեղրի, Գորիս քաղաքներ և Աճանան, Սյունիք, Բռնակոթ գյուղեր

Ուսումնասիրության հարցեր	Այո	Ոչ	Ոչ	Նշումներ
<b>Ա. Ծրագրի վայրը</b> Այդո՞ք ծրագրի իրականացման տարածքը՝				
▪ իսկ է բնակեցված			X	Ծրագրում ընդգրկված Կապան, Մեղրի, Գորիս քաղաքները բնակեցված են միջին խտության, իսկ գյուղական համայնքները բնակեցված են նոսր
▪ ծանրաբեռնված է զարգացման/ շինարարական գործունեությամբ	X			Կապան, Մեղրի, Գորիս քաղաքները և գյուղական համայնքներից մի մասն ունեն զարգացման ծրագրային քաղաքաշինական փաստաթղթեր /գլխավոր հատակագծեր/
▪ կից է շրջակա միջավայրի տեսանկյունից որևէ զգալուն տարածքի, կամ գտնվում է դրա սահմաններում			X	
▪ մշակութային ժառանգության տեղամաս է	X			Համարյա բոլոր բնակավայրերում առկա են պատմամշակութային հուշարձաններ, սակայն ծրագիրը չի առնչվում վերջիններիս հետ
▪ պահպանվող տարածք է			X	«Գորիսի բուրգեր» բնության հուշարձանը գտնվում են Գորիս քաղաքից 0.5կմ հեռավորության վրա, Հալիձորի բերդը, Վահանավանքը՝ Կապան քաղաքից գտնվում են 3կմ հեռավորության վրա
▪ ճահճուտ է			X	
▪ մանգրային ծառուտ է		X		
▪ գետաբերան է		X		
▪ պահպանվող տարածքի բուֆերային գոտի է			X	
▪ կենսաբազմազանության պահպանման հատուկ տարածք է			X	«Գորիսի» արգելավայրը Գորիս քաղաքից գտնվում է 1կմ հեռավորության վրա, «Արևիկ» ազգային պարկը Մեղրի քաղաքից գտնվում է 1,5-2կմ հեռավորության վրա, «Բողաքարի» արգելավայրը Մեղրի քաղաքից գտնվում է 10կմ հեռավորության վրա
▪ ծովախորշ է		X		
<b>Բ. Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություններ</b> Արդյո՞ք ծրագիրը կհանգեցնի՝				
▪ վերին հոսանքում գտնվող համայնքներից, արդյունաբերական ձեռնարկություններից, գյուղատնտեսությունից կեղտաջրի հեռացման և հողի էռոզիայի հոսքի պատճառով աղտոտված ջրի մատակարարման			X	բնակավայրերի ջրամատակարարումն իրականացվում է ստորերկրյա աղբյուրներից
▪ պատմամշակութային հուշարձանների/տարածքների վիճակի վատացման և այդ տեղանքների կորստի/վնասման			X	Համարյա բոլոր բնակավայրերում առկա են պատմամշակութային հուշարձաններ, սակայն ծրագիրը չի առնչվում վերջիններիս հետ

Ուսումնասիրության հարցեր	Այո	Ոչ	Ոչ	Նշումներ
▪ գրունտային ջրի չափազանց մեծ քանակով մղման պատճառով հողի նստման վտանգի		X		Նախագծում չի նախատեսվում գրունտային ջրերի ջրառ, այդ իսկ պատճառով ծրագրի իրականացումը չի կարող հանգեցնել հողի նստեցման
▪ համայնքների տեղահանման պատճառով առաջացող սոցիալական բախումների			X	չի կանխատեսվում
▪ մակերևութային և գրունտային ջրերի այլ շահառու ջրօգտագործումների հետ ջրամատակարարման համար չմաքրված ջրի ջրառի հակամարտությունների			X	Ենթածրագրի շրջանակներում խմելու ջրի մատակարարումն իրականացվում է ստորերկրյա աղբյուրներից: Խմելու ջուրը չպետք է օգտագործվի ոռոգման կամ այլ նպատակներով:
▪ չմաքրված ջրի անբավարար մատակարարման (օրինակ, չափազանց շատ պաթոգեններով կամ հանքային բաղադրիչներով)			X	Այս ենթածրագրի շրջանակներում խմելու ջրի մատակարարումն իրականացվում է ստորերկրյա աղբյուրներից, ախտահանումից հետո:
▪ բաշխիչ ցանց վտանգավոր ջրի առաքման			X	
▪ ջրառի աշխատանքների կամ ջրհորների ոչ պատշաճ պաշտպանության, հանգեցնելով ջրամատակարարման աղտոտման			X	ծրագրում ընդգրկված ջրընդունիչները և հորերը կահավորված են ցանկապատերով և սանիտարական գոտիներով
▪ գրունտային ջրի չափազանց մեծ ջրառի, հանգեցնելով աղայնացման և հողի նստեցման			X	Նախագծում չի նախատեսվում գրունտային ջրերի ջրառ, այդ իսկ պատճառով ծրագրի իրականացումը չի կարող հանգեցնել աղակալման և գրունտի նստեցման
▪ պաշարապահ ջրամբարում ջրիմուռների չափազանց շատ աճի			X	
▪ համայնքի ենթակառուցվածքի հզորությունների սահմանը գերազանցող ծավալով կեղտաջրերի արտադրության աճի			X	համայնքներում բացակայում են կեղտաջրերի մաքրման կայանները
▪ ջրի մաքրման կայաններից տիղմի ոչ պատշաճ ձևով հեռացման		X		ենթածրագրի համար կիրառելի չի:
▪ աղմուկը և այլ հնարավոր վնասները մեղմելու և ենթակառուցվածքները պաշտպանելու համար պոմպակայանների և մաքրման կայանների շուրջ ոչ պատշաճ բուֆերային գոտու առկայության			X	ծրագրի շրջանակներում նախագծված պոմպակայանը սահմանազատված կլինի սանիտարական գոտին պահպանող ցանկապատով
▪ հաղորդագծերի և մոտեցնող ճանապարհների հետ կապված վատթարացումների			X	մոտեցնող ճանապարհների վատթարացում չի նախատեսվում, իսկ էլեկտրահաղորդման գծերի հետ հատման դեպքում հատումը կիրականացվի պահանջվող նորմաներին համապատասխան
▪ քլորի և այլ վնասակար քիմիական նյութերի ընդունման, պահեստավորման և բեռնաթափման ոչ պատշաճ նախագծված կառուցվածքներից ծագող առողջապահական վտանգների	X			քլորի և այլ վտանգավոր քիմիական նյութերի ստացման, պահպանման համար նախատեսված միավորների նախագծային փաստաթղթերը կազմվում են գործող նորմատիվների պահանջներին համապատասխան
▪ ախտահանման համար օգտագործվող քլորից աշխատողների առողջության և անվտանգության վտանգների, շինարարության և շահագործման ժամանակ կենսաբանական և ֆիզիկական այլ վտանգների	X			քլորի, կամ այլ աղտոտող նյութերի հետ աշխատելիս անհրաժեշտ է պահպանել աշխատանքի անվտանգության անհրաժեշտ կանոնները
▪ մարդկանց տեղափոխման կամ պարտադրված վերաբնակեցման			X	Չի կանխատեսվում
▪ աղքատների, կանանց և երեխաների, բնիկների կամ այլ խոցելի խմբերի վրա անհամաչափ ազդեցության			X	Չի կանխատեսվում
▪ շինարարական աշխատանքների պատճառով աղմուկի ու փոշու	X			մեղմացնող միջոցառումները կներառվեն բնապահպանական կառավարման պլանում/ԲԿՊ/
▪ շինարարական աշխատանքների պատճառով ճանապարհային երթևեկության ավելացման	X			ոչ էական աճ, կանխատեսվում է շինարարության ժամանակահատվածի համար

Ուսումնասիրության հարցեր	Այո	Ոչ	Ոչ	Նշումներ
▪ շինարարական գործունեությունից հողի շարունակական էռոզիայի/ նստվածքների տեղափոխման	X			Շինարարության կազմակերպման կոնկրետ միջոցառումները կտրվեն ԲԿՊ-ում
▪ վատ ՇևՊ մաքրման գործընթացների (հատկապես ֆիլտրերում տիղմի կուտակման) և բաշխիչ համակարգերում մնացորդային քլորի ոչ պատշաճ մոնիտորինգի հետևանքով անհամապատասխան քլորացման պատճառով վտանգավոր ջրի մատակարարման			X	Ֆիլտրերում տիղմի կուտակման խնդիրը կիրառելի չէ, իսկ բաշխման համակարգում մնացորդային քլորի մոնիտորինգն իրականացվում է սահմանված կարգով:
▪ չեզոքացնող քիմիական նյութերի մատակարարմանը ոչ համարժեք ուշադրություն դարձնելու հետևանքով կոռոզիայի ենթարկված բաշխման համակարգով ջրի առաքման		X		Այս համակարգի շահագործման ժամանակ ջուրը մաքրող քիմիական նյութեր չեն գործածվում
▪ քլորի գազի պատահական արտահոսքի			X	չի կանխատեսվում
▪ չափից ավելի մեծ ջրառի հետևանքով հոսանքն ի վար ջրօգտագործողների վրա բացասական ազդեցության			X	համակարգի վերակառուցման նախագիծը մշակվում է բացառելու համար նման իրավիճակները
▪ ջրի մրցակցային օգտագործումների			X	Ծրագրի նպատակն է մեղմել ջրօգտագործման մրցակցությունը
▪ ջրամատակարարման աճի պատճառով կեղտաջրի հոսքի աճի	X			
▪ կենցաղային ջրերի ծավալի ավելացման (խոհանոցային և լվացքի ջուր) և կոյուղու մաքրման կայաններում տիղմի ծավալի աճի			X	ծրագրում ընդգրկված բնակավայրերում կոյուղու մաքրման կայաններ չկան, գոյություն ունեցողներն էլ չեն գործում
▪ ծրագրի շինարարության և շահագործման ժամանակ բնակչության մեծ ներհոսքի, ինչը կարող է սոցիալական ենթակառուցվածքի ու ծառայությունների վրա (ինչպես օրինակ ջրամատակարարման ու ջրահեռացման համակարգերը) բեռնվածքի աճ առաջացնել			X	Ծրագիրը վերաբերում է գոյություն ունեցող համակարգերի վերակառուցմանը, սոցիալական նոր ազդեցություն չի կանխատեսվում
▪ սոցիալական կոնֆլիկտների, էթե վարձում են այլ շրջաններից կամ երկրներից աշխատողների			X	Հիմնականում ներգրավվելու է տեղական աշխատուժը
▪ շահագործման և շինարարության ժամանակ պայթուցիկ նյութերի, վառելիքի և այլ քիմիական նյութերի տեղափոխման, պահեստավորման, օգտագործման և/կամ հեռացման պատճառով համայնքի առողջության և անվտանգության համար ռիսկերի	X			Ծրագրի շրջանակներում օգտագործվող պայթուցիկ նյութերի, վառելիքի և այլ քիմիական նյութերի օգտագործման անվտանգության կանոնները պահպանելու դեպքում ռիսկերը կհասցվեն նվազագույնի
▪ համայնքի առողջության և անվտանգության համար ռիսկերի՝ պատահական վթարների և բնական վտանգների պատճառով, հատկապես երբ ծրագրի կառուցվածքային տարրերը կամ բաղադրիչները հասանելի են ազդակիր համայնքի անդամների համար կամ երբ դրանց վթարը ծրագրի տարրերի շինարարության, շահագործման և ապամոնիտորման ժամանակ կարող է բերել համայնքի վնասման	X			Ծրագրի շրջանակներում օգտագործվող պայթուցիկ նյութերի, վառելիքի և այլ քիմիական նյութերի տեղափոխման, պահեստավորման, օգտագործման անվտանգության կանոնները պահպանելու դեպքում պատահական վթարների և բնական աղետների հետևանքով համայնքներին սպասվող ռիսկերը կհասցվեն նվազագույնի

<b>Հարցեր կլիմայական փոփոխությունների և աղետների ռիսկի վերաբերյալ</b> Հետևյալ հարցերը նախատեսված չեն բնապահպանական դասակարգման համար: Նրանք այս հարցաթերթում ընդգրկվել են, որպեսզի օժանդակեն կլիմայական աղետների հնարավոր վտանգները սահմանելուն	Այո	Ոչ	Նշումներ
<ul style="list-style-type: none"> <li>Արդյո՞ք նախագծային տարածքը ենթակա է այնպիսի վտանգների, ինչպես օրինակ երկաշարժերը, հեղեղումները, սողանքները, տրոպիկական ցիկլոնային քամիները, փոթորկոտ ալեկոծությունները, ցունամիի կամ հրաբխային ժայթքումները և կլիմայական փոփոխությունները (տե՛ս հավելված 1)</li> </ul>	X		Հայաստանը գտնվում է ակտիվ տեկտոնական գոտում և կարող է ենթարկվել վտանգների՝ բոլոր հնարավոր հետևանքներով
<ul style="list-style-type: none"> <li>Կարող են ջերմաստիճանի, տեղումների, կամ ծայրահեղ իրադարձությունների փոփոխությունները ծրագրի տևողության ընթացքում ազդել տեխնիկական կամ ֆինանսական կայունության վրա (օրինակ՝ անձրևների քանակի փոփոխությունների պատճառով կայուն ջրամատակարարման կրճատում, ծովի մակարդակի բարձրացման պատճառով առաջարկվող ջրամատակարարման աղբյուրում աղակալում</li> </ul>	X		տեղումների քանակի կրճատումը կարող է հանգեցնել աղբյուրներում ջրի քանակի նվազմանը, ինչն իր հերթին կհանգեցնի կայուն ջրամատակարարման խաթարմանը
<ul style="list-style-type: none"> <li>Արդյո՞ք ծրագիրն ունի դեմոգրաֆիկ կամ հասարակա-տնտեսական կողմեր, որոնք արդեն խոցելի են (օրինակ՝ բնակչության, գյուղական-քաղաքային ներգաղթողների, անօրինական բնակիչների, ազգային փոքրամասնությունների, կանանց կամ երեխաների հաճախակի անտեսվածության)</li> </ul>		X	
<ul style="list-style-type: none"> <li>Արդյո՞ք ծրագիրը կարող է մեծացնել շրջակա տարածքի կլիմայական, կամ աղետների նկատմամբ խոցելիությունը (օրինակ՝ ջրի օգտագործում խոցելի աղբյուրից, որից օգտվում են մեծ թվով սպառողներ, կամ նպաստել երկրաշարժի գոտիներում բնակչության հաստատմանը)</li> </ul>		X	

*\* Աղետը համարվում են հավանական վնասակար ֆիզիկական իրադարձություն*



## ՀԱՎԵԼՎԱԾ 2. ԵՆԹԱԾՐԱԳՐԻ ՍԽԵՄԱՏԻԿ ՔԱՐՏԵԶ

Ենթաձևագիր VII: ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԶՐԱՄՍՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՄ

